MOCK ARBITRATION COMPETITION
ԱՐԲԻՏՐԱԺ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ
2020

ԿԱՆՈՆՆԵՐ
Արբիտրաժ խաղ-մրցույթի բանավոր փուլի

1. Բանավոր փուլի կառուցվածքը

1.1 Բանավոր փուլը բաղկացած է **նախընտրական, կիսաեզրափակիչ** և **եզրափակիչ** ենթափուլերից:

1.2 Բանավոր փուլին մասնակցում են գրավոր աշխատանքներ ներկայացրած թիմերը:

1.3 Մրցող թիմերը պարզվելու են վիճակահանության արդյունքում:

1.4 Վիճակահանությունը տեղի կունենա պաշտոնական ժամանակացույցում նշված օրը, Հայաստանի ամերիկյան համալսարանում: Մասնակիցները կտեղեկացվեն կայանալիք վիճակահանության ժամի, լսարանի և այլ մանրամասների մասին էլ. փոստով կամ հեռախոսով:

1.5 Նախընտրական փուլում յուրաքանչյուր թիմ հանդես է գալիս երկու անգամ՝ հայցվորի և պատասխանողի անունից: Յուրաքանչյուր թիմի ելույթը հայցվորի և պատասխանողի դերում պետք է լինի տարբեր թիմերի հետ:

1.6 Կիսաեզրափակիչ փուլ անցնում են Գրավոր, ինչպես նաև Բանավոր նախընտրական փուլերում ստացած միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ հավաքած 4 (չորս) թիմերը:

1.7 Եզրափակչում կմրցեն Կիսաեզրափակիչ փուլում ստացած միավորների արդյունքով յուրաքանչյուր խմբից հաղթած 2 (երկու) թիմերը, որոնցից էլ կորոշվի Մրցույթի հաղթողը՝ միայն բանավոր փուլի արդյունքներով:

1.8 Նախընտրական բանավոր փուլում հավաքած միավորները հաշվի են առնվում միայն Կիսաեզրափակչում մասնակցող թիմերին որոշելու նպատակով և Կազմակերպչի կողմից սահմանված մրցանակների շնորհման համար: Կիսաեզրափակչում և Եզրափակչում թիմերը մրցում են դուրս գալու պայմանով՝ միայն բանավոր փուլի միավորների հիման վրա:

1.9 Բանավոր փուլի Նախընտրական փուլը տեղի կունենա պաշտոնական ժամանակացույցով սահմանված առաջին օրը: Նախընտրական փուլի արբիտրաժային նիստերի հստակ ժամանակացույցը կորոշվի վիճակահանությունից հետո, սակայն խորհուրդ է տրվում այդ օրը ոչինչ չպլանավորել: Կիսաեզրափակիչ և Եզրափակիչ փուլերը տեղի կունենան պաշտոնական ժամանակացույցով սահմանված երկրորդ օրը:

2. Բանավոր փուլի ընթացակարգը

2.1 Մրցափուլը սկսվելու է Հայցվոր կողմի ելույթով, այնուհետև, իր դիրքորոշումն է ներկայացնելու Պատասխանող կողմը:

2.2 Յուրաքանչյուր թիմին հատկացվելու է առավելագույնը 30 (երեսուն) րոպե ժամանակ՝ իր դիրքորոշումը ներկայացնելու և այն համապատասխան փաստարկներով հիմնավորելու համար: Թիմերն իրենք են տնօրինում իրենց հատկացված ժամանակը՝ բաշխելով այն բանախոսների միջև:

2.3 Թիմերի ելույթի ժամանակ արբիտրները պետք է փորձեն առավելագույնս չընդհատել թիմերին՝ ուղղելով նրանց հարցեր:

2.4 Թիմերը պետք է բավարարվեն հատկացված ժամանակով, և չեն կարող դիմել նախագահողին՝ իրենց ելույթի ժամանակը երկարեցնելու խնդրանքով:

2.5 Կողմերի դիրքորոշումները լսելուց հետո արբիտրները կուղղեն հարցեր: Արբիտրների հարցերի և դրանց պատասխանելու համար սահմանված է 30 րոպե: Հարցերի պատասխանները պետք է լինեն հստակ և հիմնավորված: Կողմերը կարող են իրենք որոշել մասնակցին, ով պետք է պատասխանի կոնկրետ հարցին: Կողմերը կարող են խնդրել

Նախագահողից ոչ ավել, քան 30 վայրկյան հարցին պատրաստվելու նպատակով, սակայն Նախագահողն իրավունք ունի մերժել միջնորդությունը:

2.6 Հարցին պատասխանող բանախոսը կարող է դիմել Նախագահողին՝ իրենց թիմակիցների հետ խորհրդակցելու թույլտվություն ստանալու խնդրանքով: Խնդրանքը բավարարվելու դեպքում այդպիսի խորհրդակցությունը պետք է իրականացվի 30 վայրկյանի ընթացքում:

2.7 Այնուհետև յուրաքանչյուր կողմին՝ սկզբում Հայցվորին, այնուհետև Պատասխանողին, տրվելու է 5 (հինգ) րոպե ժամանակ հակափաստարկները ներկայացնելու համար:

2.8 Մրցափուլը եզրափակվում է արբիտրների ելույթով: Եզրափակման ժամանակ արբիտրները կարող են խնդրել կողմերին արտահայտել վերջնական դիրքորոշումներ կամ հստակեցնել որոշ փաստարկներ: Արբիտրները չեն կարող արտահայտել գործի ելքի վերաբերյալ իրենց դիրքորոշումը եզրափակիչ փուլի ժամանակ. դա պետք է իրականացվի արբիտրաժային որոշման տեսքով:

2.9 Բանավոր մրցափուլի համար սահմանված ընդհանուր ժամանակը, անկախ որևէ հանգամանքից, չի կարող գերազանցել 2 ժամ 30 րոպեն:

2.10 Բանավոր փուլի ընթացակարգի աղյուսակային տարբերակը ներկայացված է սույն Կանոններին կից Հավելվածում:

2.11 Մրցափուլի ավարտից հետո կողմերը լքում են նիստերի դահլիճը, արբիտրները խորհրդակցում են և հրավիրում կողմերին՝ ծանոթանալու արբիտրների որոշմանը: Այն դեպքում, երբ արբիտրների գերակշիռ մասի որոշմամբ հաղթում է որևէ թիմ, որի հետ արբիտրներից մեկը համաձայն չէ, նա կարող է արտահայտել առանձին կարծիք՝ առանձին որոշման տեսքով կամ որոշակի իրավական հարցերի շուրջ անհատական դիրքորոշում:

2.12 Բանավոր փուլի ընթացքում մասնակիցները պետք է արբիտրներին դիմեն «Հարգելի՛ արբիտր», նախագահողին՝ «Հարգելի՛ նախագահող» կամ պարզապես պարոն/տիկին «արբիտրի ազգանունը»: Ելույթի ժամանակ թիմի անդամները պետք է դիմեն միայն արբիտրներին: Ցանկացած շփում հակառակորդ թիմի անդամների հետ արգելվում է, բացառությամբ նախագահողի թույլտվությամբ:

2.13 Քաջալերող անձանց հետ շփումը խստիվ արգելվում է: Նիստերի ժամանակ նրանք իրավունք չունեն որևէ ձևով հուշել կամ շփվել մասնակիցների հետ:

2.14 Մասնակիցները պետք է հարգանքով վերաբերվեն միմյանց հետ և պետք է դիմեն մյուս կողմին «Հարգելի՛ հայցվոր/պատասխանող»: Չի թույլատրվում ելույթի ժամանակ ընդհատել բանախոսին:

2.15 Մասնակիցները Մրցույթին պետք է ներկայանան պատշաճ հագուստով (տղամարդիկ՝ կոստյումով և փողկապով, կանայք՝ վերնաշապիկ կամ պաշտոնական զգեստ): Սույն կանոնը խախտելու համար թիմը կտուգանվի 5 միավորի չափով:

3. Միավորների հաշվարկում

3.1 Մրցույթի **գնահատման չափանիշները և կարգը** սահմանված է Արբիտրաժ խաղ-մրցույթի մասնակցության և գրավոր փուլի կանոնների 8-րդ կետում:

3.2 Յուրաքանչյուր թիմ մրցույթի յուրաքանչյուր փուլում ստանալու է միավորներ: Նախընտրական փուլերի ստացված միավորները անընդմեջ գումարվում են, իսկ Կիսաեզրափակչում՝ զրոյացվում:

3.3 Գրավոր աշխատանքների միավորների հաշվարկում

Յուրաքանչյուր թիմի գրավոր աշխատանքների (հայցադիմումի և պատասխանի) միավորները հաշվարկվում են արբիտրների կողմից տրված միավորների հիման վրա: Յուրաքանչյուր արբիտրի տված միավորների հանրագումարի հիման վրա ձևավորվում է թիմի վերջնական միավորը:

Արդյունքում, հայցադիմումի և պատասխանի համար ստացած միավորները գումարվում են և որոշվում է տվյալ թիմի գրավոր աշխատանքների ընդհանուր վերջնական միավորը:

Մրցույթի «Լավագույն գրավոր աշխատանք» անվանակարգին կարժանանա այն թիմը, որի ընդհանուր վերջնական միավորը ամենաբարձրը կլինի:

3.4 Բանավոր աշխատանքների միավորների հաշվարկում

Յուրաքանչյուր թիմի միավորները հաշվարկվում են արբիտրների կողմից տրված միավորների հանրագումարի հիման վրա: Երեք արբիտրների կողմից տրված միավորների հանրագումարից կձևավորվի թիմի միավորը: Նախընտրական փուլում յուրաքանչյուր թիմ հնարավորություն կունենա ելույթ ունենալ երկու անգամ՝ որպես հայցվոր և պատասխանող՝ տարբեր թիմերի հետ՝ կախված վիճակահանության արդյունքից: Բանավոր նախընտրական փուլի երկու մրցափուլի արդյունքում ստացված միավորների հանրագումարից կկազմվի թիմի՝ բանավոր նախընտրական փուլի վերջնական միավորը:

3.5 Բանավոր և գրավոր փուլերում յուրաքանչյուր արբիտր գնահատում է թիմի ելույթը/աշխատանքը 100 բալանոց համակարգով: Բանավոր փուլի ընթացքում բացի թիմային գնահատականից, յուրաքանչյուր արբիտր պարտավոր է գնահատել թիմի յուրաքանչյուր մասնակցին՝ 10 բալանոց համակարգով:

3.6 Առավելագույն միավոր ստացած բանախոս(ներ)ին կշնորհվի Արբիտրաժ խաղ-մրցույթի լավագույն Բանախոս կոչումն ու մրցանակը:

4. Արդյունքների հրապարակումը

4.1 Խաղի յուրաքանչյուր փուլի ավարտին մանակիցներին կհաղորդվի իրենց թիմի վաստակած միավորները: Վերջնական արդյունքները հրապարակվելու են եզրափակիչ փուլի ավարտից հետո: Յուրաքանչյուր թիմ իրավունք կունենա ծանոթանալու իր գնահատման թերթիկին Արբիտրաժ խաղ-մրցույթի ավարտին:

4.2 Եզրափակիչ փուլում արբիտրները կկազմեն հակիրճ արբիտրաժային որոշում, որը մրցույթի ավարտից 30 օրվա ընթացքում կտեղադրվի Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) իրավագիտության մագիստրոսական ծրագրի կայքի բաժնում (http://law.aua.am/alternative-dispute-resolution-clinic/):

5. Արբիտրները

5.1 Մասնակիցները նախօրոք կծանուցվեն իրենց արբիտրաժային նիստի 3 (երեք) արբիտրների կազմի վերաբերյալ:

5.2 Արբիտրաժային նիստի 3 (երեք) արբիտրների կազմի արբիտրներին կընտրի Կազմակերպիչը:

5.3 Յուրաքանչյուր դեպքում Կազմակերպիչը իրավունք ունի փոփոխելու ընտրված արբիտրին՝ արբիտրի չներկայանալու, ուշանալու կամ այլ պատճառներով, որոնք խոչընդոտում են արբիտրի մասնակցությանը նիստին:

6. Երրորդ անձանց ներկայությունը

6.1 Թիմի շահերը ներկայացնող կամ թիմի շահերով հետաքրքրված երրորդ անձինք (թիմի մարզիչը, թիմի անդամի ընկերներ/բարեկամներ) կարող են ներկա գտնվել միայն այն մրցափուլին, որին մասնակցում է տվյալ թիմը, պայմանով, որ կազմակերպչական թիմի անդամները տեղյակ են և թույլատրել են, որ տվյալ անձը (անձինք) ներկա լինի: Թիմը ներկայացնող երրորդ անձինք պարտավոր են պահպանել լռություն՝ չխոչընդոտելով նիստի բնականոն ընթացքին: Երրորդ անձանց ներկայության դեպքում՝ վեջիններիս և թիմի անդամների միջև շփումը, ինչպես նաև երրորդ անձանց կողմից մեկնաբանություններ և բացականչություններ անելը նիստի ընթացքում արգելվում է:

6.2 Դատախաղի կազմակերպչական թիմի անդամները իրավունք ունեն նիստի բնականոն ընթացքը խոչընդոտող անձին (անձանց) դուրս հրավիրել նիստի դահլիճից և չթույլատրել ներկա գտնվել հաջորդող նիստերին:

6.3 Ցանկացած այլ երրորդ անձանց մուտքը նիստին արգելվում է առանց արբիտրաժային դատարանի թույլտվության, բացառությամբ եզրափակիչ փուլի, որի մուտքն ազատ է:

7. Անանունություն

Թիմերը մրցելու են միմյանց հետ անանունության սկզբունքով. թիմերին տրվելու են հերթական համարներ, որոնք օգտագործվելու են ողջ խաղի ընթացքում

(վիճակահանության փուլից սկսած մինչև արդյունքների հրապարակումը): Անանունության սկզբունքը ենթադրում է միայն մասնակցող թիմի համալսարանի եւ ոչ մասնակիցների անունների գաղտնիություն:

8. Էլեկտրոնային սարքավորումների առկայություն

Մրցույթի բանավոր փուլերի նիստերի ընթացքում մասնակիցների կողմից լուսանկարում, աուդիոձայնագրում կամ տեսաձայնագում չի թույլատրվում: Բանավոր փուլի ընթացքում բջջային հեռախոսներից և այլ էլեկտրոնային սարքավորումներից օգտվելն արգելվում է, բացառությամբ համակարգիչներից: Մրցափուլի ընթացքում հեռախոսները և այլ սարքավորումները պետք լինեն անջատված կամ անձայն ռեժիմում:

9. Կարգապահություն

Ընդմիջումների ընթացքում (նիստերից դուրս) արբիտրաժային գործի քննարկումը արբիտրների հետ արգելվում է:

10. Մրցույթի անվանակարգեր և մրցանակներ

10.1 Մրցույթում նախատեսված են հետևյալ անվանակարգերը.

– Մրցույթի հաղթող թիմ /1-ին տեղ/
– Մրցույթի հաղթող թիմ /2-րդ տեղ/
– Լավագույն գրավոր աշխատանք
– Լավագույն բանախոս (կիսաեզրափակիչ և/կամ եզրափակիչ փուլերի արդյունքներով)

11. Կանոնները, դրանց փոփոխությունները և լրացումները

Կազմակերպիչը կորող է փոփոխել մրցույթի կանոնները կամ սահմանել լրացուցիչ կանոններ՝ մրցույթի անխափան ընթացքն ապահովելու նկատառումով: Փոփոխությունների դեպքում մասնակիցները լրացուցիչ կտեղեկացվեն: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) իրավագիտության մագիստրոսական ծրագրի կայքի բաժնում հետևյալ հղումով՝ http://law.aua.am/alternative-dispute-resolution-clinic/, գրել կամ զանգահարել Կազմակերպչին:

12. Մրցույթի փաստաթղթերի նկատմամբ իրավունքները

Կազմակերպչին ներկայացված բոլոր գրավոր աշխատանքները կարող են առանց որեւէ սահմանափակման օգտագործվել Կազմակերպչի կողմից գիտական և կրթական նպատակներով մրցույթի վերջնական արդյունքները հրապարակումից հետո:

13. Մրցույթի կանոնների հետ համաձայնվելը

Մրցույթի յուրաքանչյուր մասնակից պարտավոր է (թիմի անդամ, թիմի ղեկավար և այլն) ծանոթանալ Մրցույթի բոլոր կանոններին, իսկ հարցերի դեպքում՝ դիմել մրցույթի Կազմակերպչին: Յուրաքանչյուր մասնակից կրում է Մրցույթի Կանոններին լիարժեք չտիրապետելու հետ կապված բոլոր հետևանքները: Մրցույթի մասնակցության հայտ ներկայացնելը և Մրցույթին մասնակցելը համարվում է համաձայնություն Մրցույթի կանոնների հետ:

* ՇԱԲԱԹ ՕՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԸ ԲԱՑ Է ԼԻՆԵԼՈՒ, ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ ԱՅՆՏԵՂԻՑ: ՍԱԿԱՅՆ ԿԻՐԱԿԻ ՕՐԸ ՃԱՇԱՐԱՆԸ ՓԱԿ Է ԼԻՆԵԼՈՒ: ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ ՉԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՕԹԵՎԱՆՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԻ ՀՈԳՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՃԱԽՍԵՐԸ:

Հավելված

Բանավոր փուլի ընթացակարգի աղյուսակը.